

WILCO

Հաստատված է

«Վիլկո» ՍՊԸ

Միակ մասնակից

«Պարադեպլատց Լիմիթեդ» ՍՊԸ

Ի դեմս «Ալստերիս մենեջմենտ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ստելա Մակրի կողմից





«25» օգոստոսի 2025թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. «Վիլկո» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն» և/կամ «Բրոքեր») Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) գրանցված և լիցենզավորված ներդրումային ընկերություն է:

1.2. Ընկերության վավերապայմաններն են՝

1.2.1. Անվանումը՝ «Վիլկո» ՍՊԸ

1.2.2. Ներդրումային ընկերության լիցենզիա՝ Համար 0008

1.2.3. Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0002, Մարյան փ. 26/2

1.2.4. Կայք՝ wilco.am

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Բրոքերային ծառայությունների մատուցման սույն կանոնակարգում (այսուհետ՝ «Կանոնակարգ») օգտագործվող հասկացությունները, եթե դրանք սահմանված չեն Կանոնակարգում, մեկնաբանվում են այն նշանակությամբ, որը սահմանված է ՀՀ օրենքներում և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում, իսկ վերջիններիս կողմից սահմանված չլինելու դեպքում կիրառվում է միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

2.2. **Ընկերություն** և/կամ **Բրոքեր**՝ «Վիլկո» ՍՊԸ.

2.3. **Հաճախորդ**՝ ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում Ընկերության կողմից մատուցվում են Կանոնակարգով սահմանված ծառայությունները.

2.4. **Ծահառու**՝ Անձ, ի շահ որի իրականացվում է Ծառայությունների մատուցումը,

2.5. **Գործընկեր**՝ անձ՝ ներառյալ առանց սահմանափակման բրոքերներ, պահառուներ, ներդրումային կամ ֆինանսական կազմակերպություններ, որի ներգրավմամբ և/կամ որի միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Ընկերությունը Ծառայություններ է մատուցում Հաճախորդին.

WILCO

2.6. **ՀՀ ԿԲ** Հայաստանի Հանրապետության Կենրոնական Բանկ.

2.7. **Տեղեկատվության փոխանակման միջոցներ**՝ Ընկերության և Հաճախորդի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում ամրագրված կապի միջոցներ.

2.8. **Հաճախորդի միջոցներ**՝ Հաճախորդի և Ընկերության միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա Ընկերության տիրապետմանը և/կամ կառավարմանը հանձնված Հաճախորդին պատկանող դրամական միջոցները և/կամ արժեթղթերը, այդ թվում՝ դրանց կառավարման արդյունքում առաջացած շահույթը.

2.9. **Ծառայություն**՝ Ընկերության կողմից վարձավճարի դիմաց Հաճախորդի ցուցումների հիման վրա իրականացվող բրոքերային ծառայություն՝ ներառյալ Հաճախորդի անունից և/կամ հաշվին արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների գնման, վաճառքի և այլ գործարքների կնքումը, փոխանցումը կամ դրանց միջնորդումը՝ համաձայն Կիրառելի օրենսդրության և կողմերի միջև կնքված պայմանագրի.

2.10. **Պայմանագիր**՝ Հաճախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որը կարգավորում է կողմերի իրավահարաբերությունները, սահմանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բովանդակում է օրենքով և կողմերի համաձայնությամբ որոշված այլ պայմանները.

2.11. **Հաշիվ**՝ Ծառայությունների մատուցման նպատակով Ընկերության կամ Գործընկերոջ մոտ Հաճախորդի անունով բացված հաշիվ, որում արտացոլվում են Հաճախորդի կամ վերջինիս անունով հաշվառված այլ անձանց պատկանող ակտիվները, Հաճախորդի հաշվում հաշվառվող արժեթղթերի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները, արժեթղթերի գծով ստացված եկամուտները, արժեթղթերի հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետները և օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկությունները.

2.12. **Գնման/վաճառքի լիմիտային պատվեր**՝ Հաճախորդի կողմից ակտիվ գնելու/վաճառելու նպատակով Ընկերությանը տրվող Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ Փիքսված գնից ոչ բարձր գնով՝ առքի դեպքում, և ոչ ցածր գնով՝ վաճառքի դեպքում.

2.13. **Գնման/վաճառքի ստոպ պատվեր**՝ Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում (Ակտիվի առք/վաճառք) շուկայում ձևավորված գնով (որպես շուկայական)՝ համապատասխան հարթակում տվյալ Ակտիվի գինը Պատվերում նշված գնին հասնելու դեպքում, ընդ որում փաստացի կատարման գինը մինչև փաստացի կնքման պահը տեղի ունեցած շուկայական տատանումների արդյունքում կարող է տարբերվել Պատվերում նշված գնից՝ թե՛ հոգուտ Հաճախորդի և թե՛ ի վնաս նրա.

2.14. **Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր**՝ Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող Պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով, այն է՝ Պատվերը պարունակում է դրա կատարման հնարավորություն բացառապես համապատասխան հարթակում համապատասխան ակտիվի գինը Պատվերում նշված արժեքին հասնելու դեպքում և մինևույն ժամանակ պարունակում է՝

WILCO

2.14.1. Հաճախորդի կողմից առքի դեպքում՝ գործարքի կատարման առավելագույն գնի սահմանում,

2.14.2. Հաճախորդի կողմից վաճառքի դեպքում՝ գործարքի կատարման նվազագույն գնի սահմանում.

2.15. **Արժեթղթերի արգելադրում**՝ Գործառնություն, որի արդյունքում արժեթղթերի փոխանցումները կամ օտարումն արգելվում կամ սահմանափակվում են գործարքի պայմաններով և/կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամանակահատվածում.

2.16. **Արժեթղթերի չեղյալ ճանաչում (մարում)**՝ Հաշվում հաշվառվող արժեթղթերի դուրս գրման նպատակով իրականացվող գործառնություն՝ արժեթղթերի թողարկման չեղյալ ճանաչման (որը ճանաչվել է չկայացած) և այլ դեպքերում, այդ թվում՝ արժեթղթերի մարման դեպքում.

2.17. **Արժեթղթերի փոխարկում**՝ Հաշվում հաշվառվող մեկ դասի արժեթղթերը մեկ այլ դասի արժեթղթերով փոխանակելու նպատակով իրականացվող գործառնությունն է՝ թողարկողի կողմից սահմանված փոխարկման կարգով.

2.18. **Ռիսկերի վերաբերյալ հայտարարագիր**՝ Հաճախորդի կողմից ստորագրվող փաստաթուղթ, որը նկարագրում է Ծառայությունների մատուցման ժամանակ ի հայտ եկող որոշակի դեպքեր, իրավիճակներ և գործընթացներ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել Հաճախորդի միջոցների կորստի.

2.19. **Հաշվետու ժամանակաշրջան**՝ այն ժամանակահատվածը, որը ներառում է յուրաքանչյուր առանձին գործարքի կատարման և վերջինիս վերաբերյալ համապատասխան հաշվետվության կազմման և Հաճախորդին ներկայացման գործընթացը: Հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ավարտված յուրաքանչյուր գործարքի ավարտից անմիջապես հետո՝ վերջինիս վերաբերյալ հաշվետվության պատրաստման և ուղարկման պահով.

2.20. **Կիրառելի օրենսդրություն**՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտեր, ՀՀ ԿԲ կանոնակարգեր ինչպես նաև Կանոնակարգի, Ընկերության ներքին իրավական փաստաթղթերի և համապատասխան Պայմանագրի դրույթներ:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Կանոնակարգը սահմանում է Ընկերության կողմից Հաճախորդի միջոցներով բրոքերային ծառայությունների մատուցման գործընթացը՝ ելնելով Կիրառելի օրենսդրության պահանջներից և Ընկերության սահմանած ներքին ընթացակարգերից: Բրոքերային ծառայությունների մատուցումը չի ենթադրում Հաճախորդի միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում Ընկերությանը:

3.2. Ընկերությունը հանդիսանում է ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպություն և գործում է վերջինիս վերահսկողության ներքո:

WILCO

3.3. Կանոնակարգը կազմված է և կարգավորվում է Կիրառելի օրենսդրությանը համապատասխան և շրջանակներում:

3.4. Կանոնակարգը հանդիսանում է հրապարակման ենթակա փաստաթուղթ, որը հասանելի է ցանկացած շահագրգիռ կողմի՝ ծանոթանալու նպատակով: Կանոնակարգը տեղադրվում է Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

3.5. Կանոնակարգի յուրաքանչյուր դրույթ մեկնաբանվում է դրա բառացի շարադրանքի հիման վրա: Եթե որևէ դրույթի կոնկրետ շարադրանքը պարունակում է երկիմաստություն, ապա այդ դրույթները մեկնաբանվում են Պայմանագրի, Կանոնակարգի և Ընկերության ներքին իրավական ակտերի ընդհանուր տրամաբանության շրջանակներում:

3.6. Կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Ընկերության կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին ծանուցելու պայմանով: Կանոնակարգի բոլոր փոփոխությունները և լրացումները Կանոնակարգի անբաժանելի մասն են:

3.7. Հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը, Հաճախորդի կողմից ներկայացվող Պատվերները, Հաճախորդի հաշվին կատարվող գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունները կարող են կազմվել և տրամադրվել հայերենով, իսկ Հաճախորդի ցանկության դեպքում՝ նաև այլ լեզուներով (օրինակ՝ ռուսերեն կամ անգլերեն): Լեզվային տարբերակի ընտրության դեպքում բացառիկ իրավական ուժ ունի հայերեն տարբերակը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.8. Եթե սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահին Հաճախորդի հետ արդեն իսկ կնքված է բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր, ապա սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահից ի վեր այդ պայմանագրում կիրառված տերմինները և հղումները վերաբերում են՝ համապատասխանեցված սույն Կանոնակարգի նոր խմբագրմանը:

4. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ընկերությունը, որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձ, Հաճախորդին տրամադրում է բրոքերային ծառայություններ՝ համաձայն Կիրառելի օրենսդրության:

4.2. Սույն Կանոնակարգի իմաստով բրոքերային ծառայությունները ներառում են՝

4.2.1. Հաճախորդի Պատվերների ընդունում Հաճախորդի հաշվին գործարքներ կատարելու վերաբերյալ և/կամ դրանց ի կատարում փոխանցելն այլ անձանց,

4.2.2. Հաճախորդի Պատվերների հիման վրա, Հաճախորդի հաշվին, սակայն իր անունից Գործարքների կատարում, այդ թվում՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով իրավունքների իրականացմանն ուղղված պայմանագրերի/համաձայնությունների կնքում,

WILCO

4.2.3. Հաճախորդի Պատվերների հիման վրա արժեթղթերով գործարքների կնքում Հաճախորդի հաշվին և Հաճախորդի անունից, ընդ որում, Բրոքերը գործարքները կնքում է Հաճախորդի անունից այն դեպքերում, երբ Բրոքերի կարծիքով Հաճախորդի անունից գործարքի կնքումը վերջինիս համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ և թույլատրված է Գործընկերոջ հարթակի կանոններով:

4.3. Ընկերությունը կարող է մատուցել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված լրացուցիչ ներդրումային ծառայություններ՝ Հաճախորդի համաձայնությամբ:

4.4. Ծառայությունների մատուցումը կատարվում է Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի հիման վրա: Պայմանագրի կնքումը նշանակում է, որ Հաճախորդը ծանոթացել է և ընդունում է սույն Կանոնակարգի դրույթները:

4.5. Ընկերությունը Կիրառելի օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է Հաճախորդի հարկային գործակալի գործառույթներ: Հաճախորդը սույնով հաստատում է, որ պատշաճ տեղեկացված է և համաձայն է, որ այն դեպքերում, երբ Ընկերությունը չի հանդիսանում Հաճախորդի հարկային գործակալ, Հաճախորդն ինքն է կրում իր հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը: Ընդ որում, ՀՀ տարածքում թողարկված պարտատոմսերից ստացված արժեկտրոնային եկամուտներից գոյացած հարկային արտավորությունների հարկային գործակալ է հանդիսանում թողարկողը՝ ՀՀ օրենսդրության կարգավորումներին համապատասխան: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ցանկացած և բոլոր դեպքերում, երբ Հաճախորդին ՀՀ տարածքից դուրս թողարկված (արտասահմանյան) արժեթղթերից եկամուտները համապատասխան արժեթղթերի թողարկողների կողմից վճարվել են կամ վճարվելու են նման եկամուտների մասով կատարված/կատարման ենթակա հարկային վճարների նվազեցմամբ:

4.6. Պահպանելով Հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները՝ Ընկերությունը սույն պայմանների համաձայն Ծառայություններ մատուցելիս առանց Հաճախորդի համաձայնության կարող է օգտվել երրորդ անձանց՝ Գործընկերների ծառայություններից: Հաճախորդի Պատվերները կատարելու համար Ընկերությունը իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից և հարթակներից, եթե Հաճախորդի Պատվերում չի նշված այն կոնկրետ գործընկերը, որի հետ Ընկերությունը պայմանագրային հարաբերություններ է հաստատել:

4.7. Հաճախորդի Պատվերները Ընկերությանը ներկայացվում են գրավոր՝ Հաճախորդի կողմից Պայմանագրով սահմանված և/կամ գրանցված էլեկտրոնային փոստի միջոցով: Ընկերությունը պարտավոր է պահպանել յուրաքանչյուր Պատվերի նույնականացվող արձանագրությունը՝ ապահովելով դրա իսկությունն ու աղբյուրը:

4.8. Պատվերների կատարման ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է լավագույն արդյունքի ապահովման սկզբունքով՝ հիմնվելով գործարքների արդար և հավասար պայմաններով իրականացման վրա:

WILCO

4.9. Ընկերությունը իրավունք ունի Պատվերները փոխանցել համապատասխան գործընկերների՝ ներառյալ արժեթղթերի մասնագիտացված միջնորդներ կամ շուկայի մասնակիցներ, եթե Հաճախորդի կողմից կոնկրետ հարթակ կամ միջնորդ նշված չէ:

4.10. Ծառայությունների մատուցման ընթացքում Հաճախորդին չի տրամադրվում ներդրումային խորհրդատվություն, եթե նման պայմանավորվածություն բացակայում է: Հետևաբար, Հաճախորդն ինքն է կրում իր Պատվերների հետ կապված բոլոր ռիսկերը:

4.11. Բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով Հաճախորդի համար Ընկերությունում բացվում է բրոքերային հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ), որը նախատեսված է Հաճախորդի անունից և/կամ հաշվին կատարվող բոլոր գործարքների և մուտքագրված ակտիվների հաշվառման համար:

4.12. Հաշիվը բացվում է՝

4.12.1. Հաճախորդի հետ Պայմանագրի ստորագրումից հետո,

4.12.2. Հաճախորդի նույնականացման ընթացակարգի ավարտից հետո՝ համաձայն Կիրառելի օրենսդրության,

4.12.3. Հաճախորդի դասակարգման և ներդրումային պրոֆիլի գնահատման արդյունքների հիման վրա՝ համաձայն Կիրառելի օրենսդրության:

4.13. Հաշիվը հանդիսանում է Հաճախորդի սեփականությունը և չի ենթադրում սեփականության իրավունքի փոխանցում Ընկերությանը: Ընկերությունը պարտավորվում է Հաշվի շահագործումն իրականացնել բացառապես Հաճախորդի հանձնարարականների հիման վրա:

4.14. Հաշվի բացումը չի առաջացնում Հաճախորդի պարտավորություն՝ կատարել գործարքներ կամ մուտքագրել ակտիվներ:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

5.1. Ընկերությունը պարտավոր է պահանջել Հաճախորդից տեղեկատվություն նրա ներդրումային ոլորտում ունեցած գիտելիքների և փորձի, ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների վերաբերյալ:

5.2. Ընկերությունը Հաճախորդից կարող է պահանջել, ներառյալ առանց սահմանափակման հետևյալ տեղեկատվությունը՝

5.2.1. Ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկություններ,

5.2.2. Ներդրումային նպատակների մասին տեղեկություններ,

5.2.3. Ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ:

5.3. Ընկերությունը հիմնվելու է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:

WILCO

5.4. Հաճախորդը պարտավոր է իր կողմից նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում տեղեկացնել Ընկերությանը՝ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

6.1. Ընկերության համապատասխան մարմինը իր որոշմամբ սահմանում է Պայմանագրի օրինակելի ձև:

6.2. Հաճախորդի կողմից Պայմանագրի կնքումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

6.2.1. առերես՝ Ընկերության գրասենյակում կամ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ այլ վայրում,

6.2.2. առանց առերես շփման՝ տեսագանգի միջոցով,

6.2.3. Էլեկտրոնային փոխանակման ցանկացած եղանակով:

6.3. Պայմանագիրը համարվում է կնքված Հաճախորդի և Ընկերության կողմից երկկողմանի ստորագրման պահից:

6.4. Պայմանագրի կնքմամբ Հաճախորդի համար բացվում է Հաշիվ:

7. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Հաճախորդը կարող է ներկայացնել գործարքների կատարման Պատվերներ գրավոր (թղթային) և էլեկտրոնային (այդ թվում՝ Էլ.փոստի, ընկերության կողմից մատչելի դարձված համակարգի կամ այլ հեռահար կապի միջոցների միջոցով) Ընկերության կողմից սահմանված կարգով: Ընկերությունը պարտավորվում է ապահովել Պատվերների գրանցման և պահպանման պատշաճ մեխանիզմներ՝ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան:

7.2. Ընկերությունը պարտավոր է Պատվերը ընդունել, եթե այն համապատասխանում է օրենսդրության, ներքին ընթացակարգերի և հաճախորդի հետ կնքված պայմանագրի դրույթներին, ներառյալ՝

7.2.1. ներկայացված է պատշաճ լիազորված անձի կողմից,

7.2.2. պարունակում է գործարքի էական պայմանները (ակտիվի տեսակը, ծավալը, գինը կամ կատարման սկզբունքը, պատվերի տեսակը, ժամկետը),

7.2.3. ներկայացվել է սահմանված ժամկետներում:

7.3. Ընկերությունը իրականացնում է Պատվերի կատարում՝ բացառապես այն դեպքում, երբ Հաճախորդի ներդրումային հաշվին առկա են բավարար միջոցներ համապատասխան Գործարքի վերջնահաշվարկի, ընկերության սակագների, ինչպես նաև հնարավոր կողմնակի ծախսերի ապահովման նպատակով:

7.4. Պատվերը կարող է մերժվել, եթե.

WILCO

- 7.4.1. Հանախորդի նույնականացումը հնարավոր չէ հաստատել՝ Ընկերության կողմից սահմանված կարգով,
- 7.4.2. Պատվերը հակասում է Օրենքին, Ընկերության ներքին կանոնակարգերին կամ ընդունված ռիսկային սահմանափակումներին,
- 7.4.3. Հանախորդի հաշվին առկա չեն բավարար ակտիվներ՝ Գործարքի ապահովման կամ վճարների կատարման համար:
- 7.5. Ընկերությունը կարող է ինքնուրույն կատարել Պատվերները կամ փոխանցել դրանք Գործընկերներին՝ ըստ անհրաժեշտության: Գործարքների կատարման ժամանակ ընկերությունը ղեկավարվում է Հանախորդի լավագույն շահերի ապահովման սկզբունքով:
- 7.6. Պատվերի հիման վրա կնքված Գործարքներն ու մարումները գրանցվում են Ընկերության ներքին հաշվառման համակարգում և ներդրումային հաշվին՝ Օրենքով և Կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնակարգերով սահմանված կարգով:

8. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՆՈՐԱԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԱՐԺԱՅԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Ընկերությունն իրավասու է Հանախորդին տրամադրել փոխառություն՝ ֆինանսական գործիքների ձեռքբերման կամ օտարման գործարքներ իրականացնելու նպատակով՝ այն պայմանով, որ տվյալ գործարքի կողմ հանդիսանում է Ընկերությունը:
- 8.2. Ընկերության կողմից Հանախորդին կարող են տրամադրվել, մասնավորապես, հետևյալ տեսակի փոխառություններ՝
- 8.2.1. Ակտիվների կարճ վաճառք, որի շրջանակներում Հանախորդը վաճառում է Ընկերությունից փոխառությամբ տրամադրված ակտիվները,
- 8.2.2. Մարժայով ակտիվների ձեռքբերում, որի շրջանակներում Հանախորդը ձեռք է բերում ակտիվներ՝ օգտագործելով նաև Ընկերության կողմից տրամադրված փոխառու միջոցներ:
- 8.3. Սույն գլխում նշված փոխառությունների տրամադրման դեպքում մարժայի նվազագույն շեմը սահմանվում է 2 (երկու) տոկոս՝ բացի այն դեպքերից, երբ պայմանագրով կամ առանձին համաձայնագրով նախատեսված է այլ կարգավորում:
- 8.4. Մարժայի առանձին չափանիշները, ինչպես նաև վերոնշյալ գործարքներին վերաբերող տոկոսադրույքները, հրապարակվում են Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում: Նշված պայմանները կիրառվում են դրանց հրապարակման պահից, բացառությամբ այլ իրավաբանական հիմքով ուժի մեջ մտնելու կարգավորումների: Մարժայի պահանջների չափափակման դեպքում Ընկերությունն իրավասու է, առանց լրացուցիչ համաձայնության, ձեռնարկել միջոցներ՝ այդ թվում Հանախորդի բաց դիրքերի պարտադիր փակման եղանակով:
- 8.5. Փոխառության տրամադրումը կատարվում է բացառապես այն դեպքում, երբ Հանախորդը նախապես տվել է իր գրավոր համաձայնությունը՝ համապատասխան Պայմանագրի կամ հավելվածի միջոցով:

WILCO

8.6. Հաշվի առնելով որոշ պատվերների կատարման տեխնիկական և շուկայական առանձնահատկությունները՝ Ընկերությունն իր հայեցողությամբ և առանց Հաճախորդի առանձին հանձնարարականի կարող է իրականացնել արտարժույթի փոխարկում կամ կնքել կարճաժամկետ փոխարժեքային սվոփ գործարքներ՝ գործարքի պատշաճ իրականացումը ապահովելու նպատակով:

8.7. Սվոփ գործարքի կնքման դեպքում Ընկերությունը պարտավորվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին տրամադրել հաշվետվություն՝ ներառյալ գործարքի էական պայմանների նկարագրությամբ՝ համաձայն Կիրառելի օրենսդրության պահանջների:

9. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. Պահառության ծառայությունների մատուցումն Ընկերությունն իրականացնում է բացառապես երրորդ կողմ հանդիսացող Գործընկերների/պահառուների միջոցով՝ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված պահանջների շրջանակում: Ընկերության կողմից առաջարկվող պահառության ծառայություններն ընդգրկում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

9.1.1. Հաճախորդների անունով արժեթղթային հաշիվների բացում, վարում և փակման կազմակերպում,

9.1.2. արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցման նախաձեռնման գործընթացի կազմակերպում,

9.1.3. պահառուի մոտ Հաճախորդի արժեթղթերի պահպանում և դրանց անվանատեր հանդես գալու ապահովում,

9.1.4. արժեթղթերի պահառության ընդունման և հաշվառումից հանման գործընթացի կազմակերպում,

9.1.5. արժեթղթերի փոխանցման ապահովում պահառուի միջոցով,

9.1.6. թողարկողի և/կամ պահառուի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին կամ պահառուին փոխանցվող տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցման կազմակերպում,

9.1.7. Հաշիվներով գործառնությունների վերաբերյալ տեղեկանքների և քաղվածքների ձևակերպման կազմակերպում,

9.1.8. թողարկողների կողմից իրականացվող կորպորատիվ գործողությունների արձանագրում՝ այդ թվում արժեթղթերի փոխարկում, մարում, բաժանում, համախմբում, շահաբաժինների և այլ եկամուտների վճարման գործընթացում մասնակցություն,

9.1.9. արժեթղթերի գրավադրման, այլ ծանրաբեռնվածությունների, ինչպես նաև արգելադրման կամ արգելադրման դադարեցման գործընթացների կազմակերպում,

WILCO

9.1.10. հաշվից քաղվածքների և գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման կազմակերպում,

9.1.11. Հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գործընթացի կազմակերպում:

9.2. Պահառության ծառայությունների առարկա կարող են հանդիսանալ ինչպես Հայաստանի Հանրապետությունում թողարկված և շրջանառվող արժեթղթերը, այնպես էլ օտարերկրյա արժեթղթերը՝ բացառապես այն պահառուների միջոցով, որոնց հետ Ընկերությունն ունի համապատասխան համագործակցային պայմանագրեր:

9.3. Ընկերությունը կարող է կազմակերպել արժեթղթերից բխող իրավունքների իրականացմանն ուղղված գործընթացների իրականացումը՝ պայմանագրով սահմանված դեպքերում և սահմանված կարգով, պահառուի հետ համագործակցությամբ:

9.4. Հաճախորդի կողմից արժեթղթերի պահառության հանձնումը չի հանգեցնում այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը Ընկերությանը կամ պահառուին:

9.5. Պահառուի կամ թողարկողի կողմից տրամադրված ծանուցումների և տեղեկությունների վերաբերյալ Ընկերությունը պարտավոր չէ ստուգել դրանց իսկությունը կամ ամբողջականությունը և չի կրում պատասխանատվություն այդ տեղեկատվության ճշգրտության, ամբողջականության կամ ժամանակին ներկայացման համար:

10. ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ ԵՎ ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Ընկերությունը, Հաճախորդի Պատվերների հիման վրա կնքված գործարքների վերջնահաշվարկի շրջանակում, իրականացնում է համապատասխան արժեթղթերի կամ դրամական միջոցների փոխանցում և/կամ մուտքագրում Հաճախորդի հաշվին՝ ապահովելով գործարքների պատշաճ կատարում՝ Կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

10.2. Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված յուրաքանչյուր Պատվեր հանդիսանում է նաև վերջինիս անվամբ Միջոցների վերջնահաշվարկ իրականացնելու լիազորում:

10.3. Հաճախորդը պարտավոր է ապահովել իր հաշվին բավարար Միջոցների առկայություն՝ վերջնահաշվարկի իրականացման նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ կնքվում են մարժայով գործարքներ: Վերջիններիս դեպքում Հաճախորդի կողմից պետք է ապահովվի սահմանված մարժայի նվազագույն մակարդակը:

10.4. Դրամական միջոցների ելքագրումը Հաճախորդի հաշվից իրականացվում է միայն այն բանկային հաշվին, որն օգտագործվել է նախորդ մուտքագրումների համար՝ Հաճախորդի կողմից սահմանված ձևով ներկայացված ծանուցման հիման վրա: Այլ հաշվին փոխանցումներ կատարելու դեպքում Ընկերությունը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և հիմնավորումներ՝ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան որոշում կայացնելու համար:

WILCO

10.5. Ընկերության կողմից Հաճախորդի հաշվին կատարվող գրառումները հանդիսանում են արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ Հաճախորդի իրավունքների ճանաչման օրինական հիմք:

10.6. Ընկերությունը կատարում է միայն այնպիսի հաշվառումներ, որոնց հիմքում առկա են պատշաճ ձևակերպված և իրավական ուժ ունեցող փաստաթղթեր:

10.7. Բոլոր գործառնությունները, ներառյալ՝ փոխանցումներ, մուտքագրումներ, հաշվառում և վերջնահաշվարկ, իրականացվում են էլեկտրոնային եղանակով:

10.8. Ընկերությունը իրականացնում է գործառնությունները բացառապես Հաճախորդի հանձնարարականների, Կիրառելի օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների որոշումների, ինչպես նաև համագործակցող անձանց կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

10.9. Պատվեր կարող են համարվել Հաճախորդի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից պատշաճ ձևով լրացված և ստորագրված թղթային կամ էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը: Էլեկտրոնային փոստային հաղորդակցությունը համարվում է իրավական ուժ ունեցող, եթե կատարվել է Պայմանագրով հաստատված և Ընկերության կողմից ճանաչված հասցեներից:

10.10. Համատեղ սեփականության ներքո գտնվող Միջոցների դեպքում Պատվերներն ընդունվում են բոլոր համասեփականատերերի կողմից համատեղ ստորագրված հանձնարարականի կամ նրանց կողմից լիազորված անձի կողմից տրված լիազորագրի հիման վրա:

10.11. Ընկերությունը իրավասու է մերժել հանձնարարականների կատարումը՝ իր ներքին ընթացակարգերին համապատասխան ռիսկի գնահատման արդյունքների հիման վրա:

10.12. Հաճախորդը պարտավոր է Պայմանագրով սահմանված ժամկետում տեղյակ պահել Ընկերությանը իր հաշվին ներառված տեղեկությունների փոփոխությունների վերաբերյալ:

10.13. Ընկերությունը ապահովում է թողարկողներից և պահառուներից ստացված տեղեկությունների հիման վրա հաշվառման համապատասխան փոփոխությունների կատարումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

10.14. Ընկերությունը տրամադրում է անվանական արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու մարմինների կամ գործընկեր կառույցների հարցման հիման վրա:

10.15. Ընկերությունը կարող է իր հայեցողությամբ կասեցնել ելքագրումը Հաճախորդի հաշվից, եթե դա կարող է հանգեցնել անթույլատրելի ռիսկերի կամ զգալի վնասների:

10.16. Հաճախորդը համաձայնվում է, որ Ընկերությունը կարող է շտկել հաշվառումներում կատարված սխալները՝ առանց նախնական համաձայնության, և վերականգնել հաշվեկշռային ճշգրտությունը՝ մուտքերի կամ ելքերի միջոցով:

11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

WILCO

11.1. Արժեթղթերի փոխանցման շրջանակում Ընկերությունը իրականացնում է հետևյալ գործառնությունները.

11.1.1. ազատ առաքում (Free of Payment – FOP),

11.1.2. առաքում վճարման դիմաց (Delivery Versus Payment – DVP),

11.1.3. անվանական հաշիվների միջև փոխանցում (ներքին փոխանցում):

11.2. Ազատ առաքմամբ փոխանցման համար Հաճախորդը ներկայացնում է Պատվեր, որը պարունակում է առնվազն հետևյալ տեղեկությունները.

11.2.1. փոխանցողի և ստացողի անուն/անվանումը և հաշվի տվյալները,

11.2.2. արժեթղթերի թողարկողի անվանումը և ISIN/NSIN ծածկագիրը,

11.2.3. փոխանցվող արժեթղթերի քանակը,

11.2.4. գործարքի հիմքը և անհրաժեշտության դեպքում՝ գնի չափը,

11.2.5. իրական շահառուի վերաբերյալ նշում (անվանատիրոջ հաշիվների դեպքում):

11.3. Առաքում վճարման դիմաց փոխանցման դեպքում հանձնարարականում ներառվում են նաև.

11.3.1. վճարման ենթակա գումարի չափը և արժույթը,

11.3.2. գործարքի և վերջնահաշվարկի ամսաթվերը,

11.3.3. այլ էական տեղեկություններ՝ անհրաժեշտության դեպքում:

11.4. Արժեթղթերի փոխանցումը Հաճախորդի հաշվից կարող է իրականացվել.

11.4.1. Հաճախորդի Պատվերի հիման վրա՝ ներառյալ վաճառքի, նվիրատվության, ժառանգության, գրավի դադարեցման կամ հաշվի փակման դեպքերը,

11.4.2. դատական ակտերի կամ իրավասու մարմինների որոշումների հիման վրա,

11.4.3. այն դեպքերում, երբ պահառության պայմանագրով նախատեսված է այլ հիմնավորում:

11.5. Պատվերը համարվում է չեղարկելի մինչև հակառակ կողմի Պատվերի մուտքագրումն ու գործարքի վերջնական համընկնումը: Դրանից հետո փոփոխություն կարող է կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

12. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

12.1. Գրավի և երրորդ անձանց իրավունքների գրանցումն ու դադարեցումը կատարվում են ՀՀ օրենսդրությանը և գրավի պայմանագրի պահանջներին համապատասխան:

12.2. Գրավի գրանցման համար Հաճախորդը (գրավատուն) պարտավոր է ներկայացնել՝

12.2.1. արժեթղթերի թողարկողի անվանումը և ISIN/NSIN ծածկագիրը,

12.2.2. գրավատուի և գրավառուի հաշվի տվյալները,

WILCO

- 12.2.3. գրավադրվող արժեթղթերի քանակը,
 - 12.2.4. գրավի դադարեցման ամսաթիվը (եթե առկա է),
 - 12.2.5. գրավառուի նույնականացման տվյալները,
 - 12.2.6. գրավադրման հանձնարարականը և գրավի պայմանագիրը,
 - 12.2.7. Ընկերության կողմից սահմանված լրացուցիչ տեղեկություններ, ըստ անհրաժեշտության:
- 12.3. Գրավադրված արժեթղթերով գործառնությունները կատարվում են բացառապես գրավատուի և գրավառուի համատեղ հանձնարարականի հիման վրա:
- 12.4. Հաջորդական գրավն ընդունվում է, եթե այն արգելված չէ թողարկման պայմաններով:
- 12.5. Գրավի արտադատական իրացման համար Հաճախորդ-գրավառուն պետք է ներկայացնի պայմանագրի, ծանուցման, հանձնարարականի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակներ կամ պատշաճ վավերացված պատճեններ:
- 12.6. Փաստաթղթերը ստանալուց հետո Ընկերությունը կատարում է գնահատում և, համապատասխանության դեպքում, կատարում է գրանցումը՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- 12.7. Գրավի դադարեցումը հնարավոր է հետևյալ դեպքերում.
- 12.7.1. գրավի ժամկետի լրացում,
 - 12.7.2. կողմերի համաձայնություն,
 - 12.7.3. արժեթղթերի չեղարկում կամ մարում,
 - 12.7.4. իրավասու մարմնի որոշում,
 - 12.7.5. օրենքով սահմանված այլ դեպքեր:

13. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶՈՒՄ, ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

- 13.1. Արժեթղթերի չեղյալ ճանաչումը կատարվում է թողարկողի կամ պահառուի կողմից տրամադրված համապատասխան հիմքերի առկայությամբ:
- 13.2. Հաշվի արգելադրման որոշում կարող է կայացվել՝
- 13.2.1. Հաճախորդի հանձնարարականով,
 - 13.2.2. իրավասու մարմնի որոշմամբ,
 - 13.2.3. Ընկերության նախաձեռնությամբ՝ պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում:
- 13.3. Արգելադրման դադարեցումը կարող է իրականացվել Հաճախորդի կողմից կամ համապատասխան իրավական հիմքերով:

WILCO

13.4. Ոչ Հաճախորդի նախաձեռնությամբ սահմանված արգելանքը չի կարող վերացվել Հաճախորդի կողմից՝ առանց իրավասու մարմնի համաձայնության:

14. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԵՌՆԱՐԿՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ, ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

14.1. Ընկերությունը Հաճախորդների Հաշվում առկա ակտիվների պաշտպանությունն ապահովելու նպատակով ձեռնարկում է հետևյալ միջոցառումները՝

14.1.1. **Առանձնացված հաշվառում** – Ընկերությունը յուրաքանչյուր Հաճախորդի ակտիվները հաշվառում է առանձին՝ բաժանելով դրանք ինչպես Ընկերության սեփական ակտիվներից, այնպես էլ մյուս Հաճախորդների ակտիվներից՝ համապատասխան հաշիվների բացման և ներքին հաշվառման համակարգի միջոցով,

14.1.2. **Պահառուների ընտրության համապարփակ ընթացակարգ** – Ընկերությունը պահառուների ընտրությունը կատարում է՝ ելնելով վերջիններիս հուսալիությունից, իրավական կարգավիճակից և գործարքների պատշաճ կատարման երաշխիքներից,

14.1.3. **Ներքին վերահսկողություն և աուդիտ** – Ընկերությունը մշակում և կիրառում է վերահսկողական մեխանիզմներ՝ ակտիվների պատահական կամ դիտավորյալ չարաշահման ռիսկերը նվազագույնի հասցնելու համար,

14.1.4. **Շահերի բախման կանխարգելում** – Ընկերությունն առաջնորդվում է շահերի բախման բացահայտման և նվազեցման սկզբունքներով՝ ըստ իր ներքին կանոնակարգերի,

14.1.5. **Պարբերական հաշտեցումներ** – Ընկերությունը պարբերաբար իրականացնում է ներքին հաշվառման համեմատություն պահառուների և այլ Գործընկերների կողմից ներկայացված տվյալների հետ:

14.2. Հաճախորդի Հաշվում առկա արժեթղթերը ենթակա են առանձին հաշվառման՝ սեփականության իրավունքի, շահառուի, ինչպես նաև իրավունքների սահմանափակումների հիման վրա:

14.3. Ընկերությունը կարող է Հաճախորդի Հաշվում առկա ակտիվները օգտագործել իր անունից՝ բացառապես այն դեպքում, երբ այդ մասին նախատեսված է Պայմանագրով կամ Հաճախորդի գրավոր համաձայնությամբ:

14.4. Ընկերությունը կարող է Հաճախորդի Հաշվում առկա ակտիվները գրավադրել իր անունից միայն Հաճախորդի նախապես տրված համաձայնության դեպքում և սահմանված պայմաններով:

14.5. Հաշվում առկա ակտիվների դիմաց տոկոս չի հաշվարկվում և վճարվում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման պայման նախատեսված է Սակագներով կամ Պայմանագրով:

WILCO

14.6. Ընկերությունը կարող է Հաճախորդի ակտիվները պահել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ-ից դուրս գտնվող արժեթղթային կամ բանկային հաշիվներում՝ պայմանով, որ տվյալ հաստատությունը իրավասու է իրականացնել պահառության ծառայություններ: Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը նման պահառությանը:

14.7. Ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվող կամ գործարքների արդյունքում ստացված բոլոր ակտիվները հաշվառվում են Հաճախորդի Հաշվին՝ անհրաժեշտության դեպքում բացելով առանձին Հաշիվներ՝ ըստ արժույթի կամ ակտիվի տեսակի:

15. ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

15.1. Ցանկացած ներդրում իր բնույթով պարունակում է ռիսկ, քանի որ այն կարող է հանգեցնել ինչպես եկամտի ստացման, այնպես էլ մասամբ կամ ամբողջությամբ ֆինանսական միջոցների կորստի՝ շուկայի փոփոխությունների, գնային տատանումների, իրավական կամ տնտեսական գործոնների ազդեցության արդյունքում:

15.2. Գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ռիսկը կրում է Հաճախորդը: Ընկերությունը չի փոխհատուցելու Հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել Ընկերության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

15.3. Հաճախորդը պետք է գիտակցի, որ նախորդ բարեհաջող փորձը կամ այլ անձանց ֆինանսական հաջողությունները կապված արժեթղթերի շուկայում ներդրումների հետ չեն երաշխավորում հետագայում նմանօրինակ արդյունքներ Հաճախորդի համար:

15.4. Հաշվի առնելով, որ ռիսկը հանդիսանում է շուկայական հարաբերությունների անբաժան և օբյեկտիվ բաղադրիչ, և դրանից ամբողջությամբ խուսափել հնարավոր չէ, Ընկերությունը պարտավորություն է ստանձնում ներդնել և պահել արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգ, որի նպատակն է՝ ռիսկերը հնարավորինս կանխատեսել, կանխարգելել և/կամ նվազեցնել՝ համապատասխանեցված Ընկերության և Հաճախորդների շահերին ու կիրառելի օրենսդրությանը:

16. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ

16.1. Ընկերությունը պարտավոր է Ծառայության շրջանակներում ընդունված միջոցները պահել իր սեփական միջոցներից առանձին:

16.2. Հաճախորդների միջոցները Պայմանագրի շրջանակում կարող են հաշվառվել Ընկերության կողմից Գործընկեր կազմակերպությունների մոտ բացված առանձնացված հաշիվներում: Հաճախորդի ցանկության դեպքում միջոցները կարող են հաշվառվել նաև Հաճախորդի անունով Գործընկեր կազմակերպությունների մոտ բացված հաշիվներում, պայմանով, որ Ընկերությունը Ծառայության իրականացման համար անհրաժեշտ իրավասություններ ստանա այդ հաշիվների նկատմամբ:

16.3. Ընկերության անունից Հաճախորդների միջոցների հաշվառման համար բացված բանկային հաշվի պայմանագիրը պետք է հստակ նշում պարունակի այն մասին, որ այդ բանկային հաշվը նախատեսված է Ընկերության Հաճախորդների դրամական միջոցների հաշվառման համար:

WILCO

16.4. Ընկերությունն իրականացնում է նաև Հաճախորդի միջոցների առանձնացված ներքին հաշվառում:

16.5. Եթե կա Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայում ներդրումների իրականացման հնարավորություն, ապա այդ արժեթղթերի պահառության նպատակով Հաճախորդը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում բացում է արժեթղթերի սեփական հաշիվ, որի վավերապայմանները Պայմանագրի կնքման պահին տրամադրվում են Ընկերությանը:

17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

17.1. Ընկերությանն արգելվում է.

17.1.1. Իրականացնել բրոքերային գործունեություն՝ խախտելով Կիրառելի օրենսդրության, Կանոնակարգի և Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի պահանջները, այդ թվում՝ կատարել գործարքներ առանց պատշաճ Պատվերի կամ այդ Պատվերի շրջանակներից դուրս,

17.1.2. Ընդունել կամ կատարել գործարքներ այնպիսի ակտիվների հետ, որոնք օրենսդրորեն արգելված են բրոքերային ծառայությունների շրջանակում,

17.1.3. Օգտագործել Հաճախորդի միջոցները գրավադրման կամ երրորդ անձանց համար երաշխիք տրամադրելու նպատակով՝ առանց Հաճախորդի նախապես տրված գրավոր համաձայնության,

17.1.4. Օգտագործել Հաճախորդի միջոցները ի շահ իրեն կամ երրորդ անձի՝ եթե այդպիսի գործողությունը չի բխում Հաճախորդի Պատվերից կամ համաձայնեցված պայմաններից:

17.2. Ընկերությունը մատուցում է բրոքերային ծառայություններ միաժամանակ բազմաթիվ Հաճախորդների, ինչպես նաև իրականացնում է գործարքներ սեփական հաշվին, ինչի հետևանքով կարող է առաջանալ շահերի բախում՝ Ընկերության և Հաճախորդի կամ տարբեր Հաճախորդների միջև:

17.3. Ծախերի բախման դեպքում Ընկերությունն առաջնորդվում է Հաճախորդի շահերի գերակայության սկզբունքով և պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ այդ բախումը կանխելու կամ նվազեցնելու համար:

17.4. Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդների միջև ապահովել արդար և հավասար վերաբերմունք՝ առանց անհիմն արտոնությունների տրամադրման՝ հաշվի առնելով նրանց դասակարգման կարգավիճակը և պայմանագրով սահմանված ծառայությունների պայմանները:

17.5. Ընկերության կողմից սեփական հաշվին գործարքներ իրականացնելու դեպքում վերջինս պարտավոր է ապահովել, որ այդ գործարքները որևէ կերպ չազդեն Հաճախորդի Պատվերների կատարման արագության, առաջնահերթության և արդար պայմանների վրա: Հաճախորդի Պատվերները ենթակա են կատարման առնվազն նույն պայմաններով,

WILCO

ինչպիսին կկիրառվեն՝ եթե գործարքը կատարվեր միայն Հաճախորդի օգտին՝ առանց Ընկերության մասնակցության:

17.6. Միաժամանակ ստացված Հաճախորդների Պատվերների կատարման դեպքում Ընկերությունը պարտավոր է առաջնորդվել գործարքների արդար բաշխման սկզբունքով: Եթե տեխնիկապես հնարավոր չէ կատարել բոլոր Պատվերները ամբողջությամբ (օրինակ՝ սահմանափակ ծավալով առաջարկի պարագայում), ապա բաշխումն իրականացվում է համամասնորեն՝ յուրաքանչյուր Հաճախորդի Պատվերի ծավալին համապատասխան:

17.7. Ընկերությունն ու Հաճախորդը կրում են պատասխանատվություն սույն Կանոնակարգով և կողմերի միջև կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կամ չկատարման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա:

17.8. Կողմերը պատասխանատվություն են կրում նաև իրենց կողմից տրված երաշխիքների և հավաստիացումների համար, և պարտավոր են փոխհատուցել միմյանց այդ երաշխիքների իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասները: Կողմերից յուրաքանչյուրն ազատվում է պատասխանատվությունից, եթե մյուս կողմի կողմից նման երաշխիքների խախտումն է պատճառ դարձել իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

17.9. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց՝ այդ թվում պահառուների, գործակալների կամ Գործարքների հակառակ կողմերի կողմից իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասների համար, եթե չի ապացուցվում Ընկերության դիտավորությունն կամ ակնհայտ անփութությունը:

17.10. Հաճախորդը կրում է իր կողմից ներկայացված Պատվերի հիման վրա կնքված Գործարքի հակառակ կողմի կողմից պայմանագրի խախտման հետևանքով առաջացած բոլոր ռիսկերը: Ընկերությունը պարտավոր չէ երաշխավորել կամ ապահովել դրա պատշաճ կատարումը:

17.11. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ վնասը կամ ակտիվների կորուստը կապված է տեխնիկական խնդիրների, համակարգերի խափանումների, տեղեկատվության անհասանելիության կամ անճշտության, ինչպես նաև համաշխարհային ցանցի, բանկային կամ բորսայական հարթակների գործունեության խափանման հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խնդիրները եղել են դիտավորությամբ կամ ակնհայտ անփութությամբ պայմանավորված:

17.12. Ընկերության կողմից տրամադրվող համակարգերը և տեխնոլոգիական լուծումները Հաճախորդին հասանելի են «ինչպես կա» սկզբունքով: Ընկերությունը չի տալիս որևէ երաշխիք կամ հավաստիացում դրանց ճշգրտության, անխափանության կամ Հաճախորդի ակնկալիքներին համապատասխանության վերաբերյալ:

17.13. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք պատճառվել են պատժամիջոցների, արգելքների, իրավական սահմանափակումների կամ

WILCO

արտաքին կարգավորիչ մարմինների որոշումների հետևանքով, եթե դրանք հանգեցրել են գործարքի չկատարման կամ Հաճախորդի միջոցների կորուստի:

17.14. Ընկերությունը պարտավոր չէ փոխհատուցել Հաճախորդին որևէ վնաս, եթե Պատվերը չկատարվի այն պատճառով, որ դրա իրականացումը տեխնիկապես, իրավաբանորեն կամ փաստացիորեն դարձել է անհնար՝ անկախ պատճառներից:

17.15. Ընկերությունը կատարում է իր կողմից փոխանցված տեղեկատվության պաշտպանությունը՝ ըստ օրենքի, սակայն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից տեղեկատվության բացահայտման կամ չթույլատրված օգտագործման համար, եթե ինքն այդ գործընթացում ուղղակի ներգրավված չի եղել:

17.16. Ընկերության պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես այն դեպքերով, երբ պատճառվել է ուղղակի վնաս դիտավորությամբ կամ ակնհայտ անփութությամբ և պայմանավորված է Ընկերության գործողություններով:

17.17. Հաճախորդը պարտավորվում է փոխհատուցել Ընկերության կրած ծախսերը և վնասները՝ եթե դրանք առաջացել են Հաճախորդի գործողությունների արդյունքում և կապված են երրորդ անձանց ներկայացրած պահանջների բավարարման հետ:

17.18. Ընկերությունն ու Հաճախորդը ազատվում են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման պատասխանատվությունից, եթե այն պայմանավորված է անհաղթահարելի ուժի ազդեցությամբ՝ ներառյալ բնական աղետներ, պատերազմ, զանգվածային անկարգություններ կամ օրենսդրական սահմանափակումներ:

18. ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

18.1. Ընկերության կողմից Հաճախորդին բրոքերային ծառայությունների մատուցման դիմաց ենթակա է գանձման վարձավճար՝ համաձայն սույն Կանոնակարգի անբաժանելի մաս հանդիսացող **«Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող սակագներ»** փաստաթղթում սահմանված դրույթների (այսուհետ՝ «Սակագներ»): Սակագները սահմանվում են Ընկերության կողմից միակողմանի կարգով՝ Կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

18.2. Սակագներով սահմանված վճարները կարող են ներառել, այդ թվում՝

18.2.1. բրոքերային գործարքների միջնորդավճարներ (տոկոսային և/կամ հաստատագրված ձևաչափով),

18.2.2. արժույթային փոխարկման միջնորդավճարներ,

18.2.3. պահառուի, Գործակալի և այլ երրորդ անձանց կողմից գանձվող վճարների վերագնահատում՝ ըստ անհրաժեշտության:

18.3. Վճարները հաշվարկվում և գանձվում են յուրաքանչյուր առանձին գործարքի կատարման պահին՝ առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Սակագներով կամ Պայմանագրով այլ դրույթ է նախատեսված: Վճարների գանձումն իրականացվում է անակցեպտ կարգով՝ ուղղակիորեն Հաճախորդի դրամական միջոցների հաշվից:

WILCO

18.4. Հանախորդն ընդունում և համաձայնվում է, որ այն դեպքում, երբ իր Հաշվին որևէ արժույթով առկա է բացասական մնացորդ Ընկերությունը լիազորված է, առանց Հանախորդին նախապես տեղեկացնելու, համապատասխան բացասական մնացորդը ծածկել Հանախորդի՝ այլ արժույթի դրական մնացորդի հաշվին: Այս դեպքում արտարժույթային փոխարկումն իրականացվում է Ընկերության կողմից՝ տվյալ պահին գործող շուկայական փոխարժեքով՝ Հանախորդի համար հնարավորինս նպաստավոր պայմաններով: Ընկերությունը պարտավոր չէ ստանալ Հանախորդի նախնական համաձայնությունը նման փոխարկման կամ փոխանցման համար և պատասխանատվություն չի կրում այդ գործողությունների արդյունքում Հանախորդի հնարավոր կորուստների համար: Սույն կետի կարգավորումը չի տարածվում այն արժույթի նկատմամբ, որի մասով Ընկերությունը տվյալ Հանախորդին Պայմանագրով տրամադրել է ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելու հնարավորություն:

18.5. Հանախորդի կողմից ներկայացված Պատվերի հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ վճարները ենթակա են հստակ հաշվառման և արտացոլվում են Հանախորդին տրամադրվող հաշվետվություններում՝ Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

18.6. Արտարժույթի փոխարկման անհրաժեշտության դեպքում փոխարժեքը սահմանվում է Ընկերության կողմից տվյալ պահին կիրառվող փոխարժեքով, որը հնարավորինս համահունչ է միջին շուկայական փոխարժեքին և նպաստավոր է Հանախորդի համար:

18.7. Սակագների փոփոխությունը կիրառումից առնվազն 20 օր առաջ հրապարակվում է Ընկերության պաշտոնական կայքում: Նույնաժամանակ, Հանախորդներին տրամադրվում է համապատասխան ծանուցում՝ Պայմանագրով սահմանված եղանակով:

18.8. Հանախորդն իրավունք ունի Սակագների փոփոխության վերաբերյալ իր անհամաձայնության դեպքում՝ նախապես ծանուցելով Ընկերությանը, միակողմանի կերպով դադարեցնել Պայմանագիրը՝ առանց տույժի:

19. ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԶԱՂՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

19.1. Եթե Ընկերությունը կատարել է Հանախորդի Պատվերը, ապա պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կատարմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը, Հանախորդին տրամադրել Պատվերի կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ Կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան: Եթե Պատվերը կատարվել է մի քանի փուլով, հաշվետվությունը տրամադրվում է յուրաքանչյուր փուլով կատարված գործարքի վերաբերյալ առանձին:

19.2. Յուրաքանչյուր գործարքի գրանցման կամ մերժման վերաբերյալ հաշվետվությունը, քաղվածքը, ծանուցումը կամ տեղեկանքը տրամադրվում է Հանախորդին վերջինիս կողմից ներկայացված պահանջը ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

19.3. Ընկերությունը, եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ, Հանախորդին տրամադրում է հաշվետվություն, տեղեկանք կամ

WILCO

քաղվածք վերջինիս հաշվին կատարված գործարքների, գործառնությունների և մնացորդի վերաբերյալ:

19.4. Հաճախորդը իրավունք ունի Ընկերությունից պահանջելու նաև հետևյալ տեղեկությունները՝

19.4.1. տեղեկանք Հաճախորդի հաշվին գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ,

19.4.2. օրենքով կամ Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

19.5. Սույն Կանոնակարգով սահմանված՝ Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունը ներառում է առնվազն հետևյալ տեղեկությունները՝

19.5.1. Ընկերության անվանումը,

19.5.2. Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ Հաճախորդին նույնականացնող համարը,

19.5.3. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,

19.5.4. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

19.5.5. Հաճախորդի կողմից տրված պատվերը,

19.5.6. Գործարքի կնքման վայրը,

19.5.7. Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

19.5.8. Պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),

19.5.9. Պատվերի բնույթը, եթե նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),

19.6. Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են էլեկտրոնային փոստի միջոցով, ապա դրանց ներկայացման պահ է համարվում Ընկերության էլեկտրոնային փոստի ելքային նամակագրության բաժնում տվյալ հաշվետվության՝ որպես ուղարկված նամակ գրանցման պահը:

19.7. Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են փոստով, դրանց ներկայացման պահ է համարվում փոստային ծառայության կողմից տրված անդորրագրի վրա նշված ամսաթիվը: Անդորրագիրը կցվում է հաշվետվության՝ Ընկերությունում պահվող օրինակին:

19.8. Առձեռն եղանակով տրամադրվող հաշվետվությունները Հաճախորդին են տրվում երկու օրինակից: Հաճախորդը պարտավոր է ստորագրել յուրաքանչյուր հաշվետվության մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ստացել է դրանք: Ստորագրված օրինակը վերադարձվում է Ընկերությանը: Հաճախորդի կողմից հաշվետվության՝ Ընկերությունում

WILCO

պահպանվող օրինակի վրա ստորագրելու պահը հանդիսանում է հաշվետվության ներկայացման պահ:

19.9. Հաշվետվությունը, քաղվածքը կամ տեղեկանքը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված և վավեր, եթե վերջինս դրանց բովանդակության վերաբերյալ առարկություն չի ներկայացնում ստացումից հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

19.10. Ընկերության՝ լիցենզիայի դադարեցումը հիմք չէ հաշվետվությունը Հաճախորդին չտրամադրելու համար: Լիցենզիան ուժը կորցրած կարող է է ճանաչվել բացառապես Օրենքով սահմանված կարգով:

20. ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒՃՈՒՄ

20.1. Կանոնակարգը, հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մաս, Հաճախորդի նկատմամբ ուժի մեջ է մտնում Պայմանագրի ստորագրման պահից և շարունակում է գործել մինչև Պայմանագրի դադարեցումը՝ վերջինիս հիման վրա ստանձնած բոլոր պարտավորությունների լիարժեք կատարումով:

20.2. Եթե Հաճախորդի Հաշիվը վերջին 6 (վեց) ամսվա ընթացքում չունի որևէ շարժ կամ դրական մնացորդ, Ընկերությունն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ Հաճախորդին առնվազն 10 (տասը) օր առաջ ծանուցելու պայմանով:

20.3. Ընկերությունը կարող է անմիջապես լուծել Պայմանագիրը՝ Հաճախորդին ծանուցելով այդ մասին, եթե՝

20.3.1. Հաճախորդը տրամադրել է կեղծ կամ սխալ տեղեկատվություն,

20.3.2. Հաշիվը կասկածվում է որպես անօրինական կամ կասկածելի գործունեության գործիք,

20.3.3. Ընկերությունը տեսնում է ռիսկեր՝ կապված իր հեղինակության կամ քիզնես շահերի հետ,

20.3.4. առկա է իրավական ուժ ունեցող որոշում, որը ենթակա է պարտադիր կատարման,

20.3.5. Հաճախորդը մահացել է կամ ճանաչվել է անհայտ բացակայող,

20.3.6. Հաստատվել է, որ Հաճախորդի երաշխիքները և հավաստիացումները չեն համապատասխանում իրականությանը:

20.4. Պայմանագրի լուծումը ենթադրում է նաև Հաշվի փակումը՝ եթե վերջինս գրոյական մնացորդ ունի: Եթե Հաշվին առկա են Միջոցներ, Հաճախորդը պարտավոր է Պայմանագրի լուծումից առաջ կամ անմիջապես հետո՝ սահմանված ժամկետներում, տրամադրել Միջոցների փոխանցման պատվեր և վճարել փոխանցման ծախսերը՝ ըստ Սակագների:

20.5. Եթե Հաճախորդը չի տրամադրում Միջոցների փոխանցման պատշաճ Պատվեր սահմանված ժամկետներում, Ընկերությունը կարող է գանձել տույժ՝ յուրաքանչյուր ուշացման օրվա համար՝ Հաշվին առկա Միջոցների շուկայական արժեքի 0.1%-ի չափով:

